№ 13 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1895

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ԵՐԶՆԿԱՅ ՏԱԳՆԱՊԻ ՄԷՋ

ԿՌԻԻ ԱՍՊԱՏԱԿ ԽՄԲԻ. ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽԺԴԺՈՒԹԵԱՆՑ. ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ. ՄԱՏՆԻՋ ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿՈՒՆԻԻ ՁԱՐԿՈՒՄԸ.

—

Հայ հայդուկ-խմբի մի մասը վեց օր շարունակ կը պաշարուի երեք վաշտ զօրքէ, որ թնդանօթ իսկ տարած էր իւր հետ։ Վերջապէս օգոստ. 6-ին, կիւրակէ առաւօտ ժամը 9-ին, սոսկալի հրացանաձգութիւն մը կսկսի երկու կողմէն։ Հայդուկաց թիւը անհամեմատ նուազ էր՝ հազիւ 17 հոգի և դիրքերնին անյարմար, սակայն կռիւը հերոսական կըլլայ—ամբողջ 3 ժամ. հայդուկներէն երկուսը վիրաւոր կիյնան, երեքն ողջ կը կալանաւորուին, իսկ միւսները ճեղքելով ահագին թշնամեաց բանակը, կը յաջողին փախուստ տալ։

Զօրքերու կողմէն որքան կորուստ կայ, յայտնի չէ։ Հայդուկ-խմբի հանգիպումը առիթ մը կարծես եղաւ մեր արիւնարբու կառավարութեան, որ ալ սկսաւ կեղեքումները, բռնաբարութիւնները, աւրշտուկը, թալանը աւելի ընդարձակ սահմանի մէջ գործել. միայն 1000-1500 հետևակ ու հեծեալ զօրք անդադար կը կողոպտէ, կը լլկէ, կը ծեծէ և կը մեռցնէ։ Նոյն չափ ալ բաշիբոզուկ թուրքեր ու քուրդեր սուլթանի կառավարութեան հրամանով՝ կամբողջացնեն, կը գերազանցեն կանոնաւոր զօրքի կատարած անհամար գազանութիւնները։ Կամախի Թահիր փաշան հարիւրաւոր բաշիբոզուկներով, Կէճանէսի Կօճուռ օղլի Համիտ պէյ նոյնպէս իր կողմի 150 բաշիբոզուկներով և մինչև իսկ Մերաստիոյ կողմերէն անթիւ չէրքէզներ՝ իմանալով յայտնի համարձակ կատարուած աւարառութիւնները՝ սկսած են երզնկայ վազել, իրենց գազանական պահանջներին, իրենց անասնական կրքերին յագուրդ տալու համար...

Վերջապէս ամեն ձեռքը հասնողը սկսաւ մէկ-մէկ բան փետտել խեղճ հայէն։

Կառավարութիւն մէկ կողմէն բան գործ ըրած է հայ վանքերու, հայ գիւղերու աւերումն ու թալանումը, միւս կողմէն ալ, իւր շահատակութեանց ապացոյց գտնելու մտածումով, սկսած է հետզհետէ յիմար, աննպատակ ձերբակալութիւններ ընել։ Արմենակ Հայկունիի և իր նման վատերու մատնութիւնները, զրպարտութիւնները առատ նիւթ եղան ոստիկանութեան և ամսուս 13—14-ին քաղաքիս մէջ բազմաթիւ ձերբակալութիւններ տեղի ունեցան։ Բանտարկեցան շատ մը պատուաւոր անձնաւորութիւնք, որոց թիւը 30-ի կը հասնի առ այժմ. հանդիպողին ոստիկանատուն կը քշեն և հարցաքննեն.

—Այս գործի վարիչներէ՞ն էք.

—Դրամ ու զէնք դուք տուած էք Երմէնի դահրիմաններուն (հայ հերոս).

—Այս գործը պատրիարքի հրամանո՞վը կընէք.

—Պատրիարքին հետ կը թղթակցի՞ք. և այլն, և այլն։

Այս կարգի հարցումներ կընեն և երբ փոխարէն բացասական պատասխաններ կը ստանան, կը նետեն զանոնք բանտին խորը՝ թէրսխանէն, ուր քստմնելի չարչարանքներ կսպասեն անմեղներուն։

Օրէ օր նոր ձերբակալութիւններ տեղի կունենան։

Սեպուհ ս. Լուսաւորչի վանքի վանապետուհի՝ (դուստրը վանահայր և առաջնորդ տ. Վարդան վարդապետի) Մայր Մարթայի վրայ թէև նաւթով այրելու սպառնալիքը ի գործ չդրին, բայց անոր տուած չարչարանքներին չափ ու սահման չունի. վերջի օրերս ձիաւոր զօրականներով քաղաք բերին և բանտարկեցին զայն. իսկ իւր հարսը անչափահաս տղոցմով լեռները տարին.։ Մարթայի մէկ որդին հիւանդ վիճակի մէջ վանքը կը մնայ՝ հիւանդապահ ունենալով մարդասպանող զինուորներն։

Դեռ որոշ տեղեկութիւններ կը պակասին մեր ընդհանուր վիճակի մասին. թուրք խուժանը և ամբողջ Դ. զօրաբանակն նշանի կսպասեն հայերուս վրայ յարձակելու, ջարդելու, կոտորելու, գրգռումը հետզհետէ կը

սաստկանայ... և գուցէ այսօր, վաղը Երզնկան չկայ։

Վատահոչակ Արմենակ Հայկունին բնիկ երզնկացի է. 90 թ. յեղափոխական և ապա Կ. Պոլիս Նազըմ փաշայի գլխաւոր գործիքներէն մինը ըլլալով՝ անհամար մատնութիւններ ըրաւ և շատ մը բանտարկութեանց պատճառ եղաւ։ Այդ նախկին յեղափոխանը, մի քանի տարիէ ի վեր Երզնկայ կը բնակէր, առանց որոշ դիրք մը բռնելու։ Այս վերջին դէպքերուն առթիւ իւր գլուխը դուրս հանեց և սկսաւ բոլորովին յայտնի համարձակ մատնութիւններ ընել և աջակից դառնալ ոստիկանութեան։ Գարշելին իր ընկերները՝ Մամբրէն, Թիւթինճիէվը չխիշեց երբէք։

Օգոստոս 17-ին, երեկոյեան ժամը 11-ին, շուկայէն տուն վերադարձած պահուն, Սիւրմէնենց փողոցի մէջ, յանկարծ ռէվոլվէրի պայթիւն մը լսուեցաւ և յեղափոխական վարձատրիչ գնդակ մը եկաւ Հայկունիի ձախ կողը խրեցաւ կռնակէն։ Մատնիչը երեք անգամ իր վրայ դառնալով՝ ինկաւ գետին, անիմաստ գոչիւններ արձակելով. քիչ յետոյ ինկած տեղէն ելնելով, մտաւ Լազեանի տունը՝ „Ջ, զարնուեցայ“ ոռնալով, անկէ ալ դուրս եկաւ և „օգնութի՛ւն“ պոռաց ու ինկաւ վերջապէս տուն փոխադրեցին։ Քօմիսէր, բժիշկ և այլն կը հասնին և ժամ մը վերջ գնդակը կը հանեն թէև, բայց ծանր է վիճակը։

Քօմիսէրը գիրկը առած մատնիչին կըսէ եղեր. „Արմենակ, օղլում, պու իշ պէնիմ իւզիմտէն օլտու սանա. զարար եօք, մէրագ իթմէ“. (Արմենակ, զաւակս, այս գործը իմ պատճառաւ եղաւ քեզ, վնաս չունի, մի՛ մաշուիր)։ Ի՞նչ սրտառուչ դամբանական աշխատաւոր մատնիչի մը. իսկ գնդակահար Հայկունին կը գոչէր հայերուն. „ես ի՞նչ ըրի, ես որո՞ւ ինչ եմ ըրեր, որ ասանկ ըրին“։

Ի՞ՐԲԸ մահուան դուռն իսկ կուզէ ստել, կեղծել, կարեկցութիւն շահիլ, „ի՞նչ եմ ըրեր“ յայտարարելով։

Ո՛չ, ստորաքարշ արարածնե՛ր, վատե՛ր, դաւաճաննե՛ր. այդ ողորմելի հնարքներն հնացան. ո՛ւր որ երթաք, որչափ կեղծէք, որքան տարիներ անցնին, ձեր դատավճիռը կտրուած է։—Դաւաճանը չպիտի ապրի, մա՛հ մատնիչին։

ԹԱՄԶԱՐԱՅԻ ԿՌԻԻԸ

Շապին-Գարահիսարէն մէկ ժամ հեռի Թամզարայ աւանին մէջ, ամսոյս սկիզբները օր մը, Թուրք սրիկայ մը, այրի հայ կնոջ մը դուռը զարնելով, օղի կուզէ անկէ։ Խեղճ կինը չունենալուն համար կաղաչէ անոր, որ բարեհաճի ուրիշ տնէ մը առնուլ. Թուրքը, որ կաղ մ'է, կսկսի անլուր հայհոյանքներ տեղալ կնոջ գլխուն և մինչև իսկ ծեծելու նպատակաւ շարժումներ ընել։ Այդ պահուն անկէ անցնող Գրիգէսէլեան Մովսէսը՝ որ ծանօթ է այդ թուրքին, մի քանի յանդիմանական խօսքերով կըսէ անոր, որ անամօթութիւն չընէ, այլ երթայ ուրիշ ունեցողէ մը առնու օղին։ „Կեավուրլար, տահա չօգ սէցիլէյճէ՞ք միսինիզ“—կեավուրնե՛ր, տակաւին շատ պիտի խօսի՞ք, և ձեռքի գաւազանով կսկսի հարուածել։ Այն վարկեանին խուռն բազմութիւն մը կը հասնի՝ ամենն ալ Թուրք և կսկսի օգնել կաղ Թուրքին. բազմաթիւ հայեր ալ կը ժողվին, բայց փոխանակ կուռելու, կաշխատին համոզելով յետ քաշել Թուրքերին։ Թուրքերը, որ կանխամտածութեամբ այդ կաղը յառաջքշած են եղեր և իրենք ալ պատրաստուած հայերին լաւ դաս մը տալ, փոխանակ անոնց աղաչանաց մտիկ ընելու, անոնց վրայ կը յարձակին։ Այդ պահուն մի քանի կապոց խոշոր ցուպեր կը հասցուներն կուռոյն վայրը, որք յառաջուց պատրաստած են եղեր. ամեն Թուրք մէկ մէկ ցուպ առած ձեռքը՝ անզէն հայերին սոսկալի ծեծ մը կը քաշեն, որ կը տեւէ ամբողջ երկու ժամ. այնտեղ գտնուող Թուրք պայտատ մը իւր խանութէն մուրճ և ագցան դուրս կը նետէ ըսելով՝ թէ ահաւասիկ ձեզի զէնք, կեավուրներին գլուխը ջախջախեցէք։ Իսկ Թուրք մեծերը միշտ կը խրախուսեն խուժանը։

Մի կողմից կռիւը կը շարունակուի, միւս կողմանէ մի քանի Թուրք կը հասնեն և միւթէսարիֆ Մուսթաֆա պէյին ներկայանալով, կսեն՝ թէ կեավուրները մեզ պէյին ներկայանալով, կսեն՝ թէ կեավուրները մեզ ջարդեն կոր։ Մուսթաֆա պէյ, որ կանխաւ հրապարակաւ պոռացել էր՝ թէ „Խմիմի ինսանլըգ տէֆտէրինտէն սիլսինլէր էկէր պու մէմլէքէթի ալթիւսթ եաբմատան պունտան կէտէրսէմ“—անունս մարդկութեան տոմարէն թող սրբեն, եթէ այս քաղաքը տակն ու վերայ չբրած, մեկնիմ.—անմիջապէս Թապուր աղասիին կը հրամայէ երթալ Թամզարայ և Սասունէ մնացորդ կեավուրները բնաջինջ ընել ու դառնալ։ Ոստիկանապետը կը մերժէ այդ հրամանը և կսէ, որ ինքը միայն կռիւը դադրեցնելով, յանցաւորները բռնել բերելու իրաւունքն ունի, և կը մեկնի խումբ մը ոստիկաններով։

Դիխոսոտի գօղճի պաշի Բէճա գազանը, որ քաղաքի հայոց վրայ մեծ ազդեցութիւն ունի և որ իւր շահատակութեամբքը սոսկացուցած է ամենուն, աւելի կանուխ իմանալով կռիւը, ձի հեծնելով կերթայ Աւութմուշ ըսած Թուրք այգիները և անկէ 10-15 սրիկաներ հետը առնելով՝ Թամզարայ կերթայ հայերին ջարդելու. բայց երբ հոն հասնելով, ոստիկանապետը կը

տեսնայ՝ առանց մէջադէպի կը թողու, կը փախչի։

Ուրթ տասը հայ, նոյն չափ ալ թուրք կը բանտարկուին։ Քաղաքի ժողովուրդը այս դէպքէն յուզեալ՝ ամբողջ հայ խանութներ և եկեղեցիները կը փակեն, կը փակեն նոյնպէս Թամզարայի, Անդրկաս գիւղաքաղաքի և Ածպտեր գիւղի հայ խանութները. Թամզարայի ժողովուրդէն 150-ի չափ ընտանիք քաղաքի գերեզմանատան մէջ վրանաբնակ են այդ օրէն ի վեր. եօթ-ութ ծանր վիրաւորներ, որոնց մեռելը ագցանով պատառոտած են՝ քաղաքի ս. Փրկչեան վարժարանին մէջ կը դարմանուին, իսկ ցուպերով վիրաւորածները թիւ չունին։ Ժողովրդին այս միաձայնութեան վրայ քաղաքապետը խոհեմութիւն կը համարի այդ առթիւ բանդարկուած հայերին ազատ արձակել՝ յուսալով թէ գուցէ հայերը խաղաղութիւնը վերահաստատեն, բայց հայեր հաստատ կեցած իրանց որոշման վերայ, թէ Սեբաստիոյ վալիէն և թէ նոյն տեղւոյն առաջնորդ Պետրոս եպիսկոպոսէն եկած հրամանաց վճռողականապէս պատասխանած են՝ թէ իրենք կուզեն պաշտօնական դատավարութիւն քաղաքապետին և անոր արբանեակներու գործոց մասին, թէ կուզեն զօրաւոր երաշխաւորութիւն մը իրենց անձին և ստացուածոց ապահովութեան. քանի որ ասոնք չը կան, ամեն ինչ միւթէսարիֆին կը վայլէ, ըսած են։ Քաղաքապետը աւելի շահելու համար հայոց սիրտը գօլճի պաշի Ըէհան իւր մի քանի ընկերներով բանդարկած է (՞՞)։

Մինչ այս թւական այդ դրութեան մէջ է Հապին-Գարահիսար. միայն եկեղեցիները բացուած են. առ պատրիարքարան յղած հեռագիրները անյայտ եղած են. յայտնի չէ՝ թէ այնտեղի հեռագրատունը, թէ Կ. Պոլսոյ պաշտօնատները կը շրջի՞ն տակաւին. սա միայն ճիշտ է՝ թէ պատրիարքարանը հեռագիր չէ ստացած։

Գիշեր ցերեկ վարկեան առ վարկեան մեծ ընդհարման մը ահը կը տիրէ ժողովրդեան վրայ. թուրք սրիկաներ սրճարանները լցուած են. հայ ու թուրք իրարու կը նայեն կատղած աչքերով։ Կսի թէ Սեբաստիայէն քննիչ եկեր է Գարահիսար։

—

Վերջին լուր Թամզարայից.—

(Երկրորդական աղբիւրից ստացած լինելով այս լուրը, հրատարակում ենք վերապահութեամբ.)

Հապին-Գարահիսարի մութէսարիֆը և զատըն Թամզարայ կուզեն երթալ Թամզարացիները ստիպելու, որ երթան տուներնին։ Բայց Թամզարայ չմնած հայերէ յարձակում կրելով՝ երկուսն ալ կսպանուին։ Հետևանքը յայտնի չէ. մանրամասնութիւնք կը պակսին։

ՐԷՖՕՐՄՆԵՐԸ

V

Տաճկահայաստանը վարչական տեսակէտով բաժանուում է՝ վիլայէտների (նահանգների), որոնց կառավարիչներն են սուլթանից նշանակուած և անունները կիսապաշտօնապէս եւրոպական պետութիւններին յայտնուած վալիները, վիլայէտը՝ սանջակների (գաւառների)-կառավարիչներն են սուլթանից նշանակուած մութէսարիֆներ. սանջակները՝ կազաների (գաւառակների)—կառավարիչներն են՝ վալիի կողմից առաջարկած և սուլթանի կողմից հաստատած՝ գայմագամներ. իսկ կազաները՝ նահիաների (մի քանի համայնքների կամ գիւղերի միութիւն, որոնք նահիա կազմելու համար պիտի ունենան 2000-10,000 բնակիչ. 1000 բնակիչ ունեցող համայնքն էլ կարող է կազմել առանձին նահիա, եթէ միջոց ունի վարչական ծախսերը հոգալու)—կառավարիչն է՝ խորհուրդի կողմից ընտրած և վալիի կողմից հաստատած՝ միւդիրը. իսկ խորհուրդը ընտրւում է ազգաբնակութիւնից. նրա անդամների թիւն է 4-8.—միակ համակրելի կէտը, որ գոյութիւն ունի Ծրագրի մէջ, նա էլ խեղդած է. դիպլոմատիան հաւատարիմ մնալով իր սկզբունքին, անհրաժեշտ է համարել, որ միւդիրը (որին ընտրում է ոչ թէ ուղղակի ժողովուրդը, այլ նրա ընտրեալները իրենց միջից), անպատճառ վալիից հաստատուի, որպէս զի այդ ընտրութիւնը „օրինական“ ձև ստանայ, որով և նա՝ դիպլոմատիան պահպանել է սուլթանի գերիշխանութիւնը։

Դիպլոմատիայի ամենանշանաւոր և նուրբ մանեւրը այստեղ է. այս կէտում նա իսկապէս իւր ամբողջ հասակով ի ցոյց է դրած, որովհետև այս խաղով ճարպիկ կերպով կարելի է ժողովրդի աչքին քող քաշել՝ կարծել տալու, թէ ինքը մասնակցութիւն ունի վարչական գործերում, հետևապէս և իւր շահերը վտանգի չեն կարող ենթարկել։ Եւ այս նուրբ ճարպիկ մանեւրը կատարեալ անելու համար, կառավարիչների մօտ ստեղծած են զանազան „խորհուրդներ“, որոնց անդամների թիւը 4—8-ն է և որոնք կազմում են հետևեալ կերպով.—նահիայի խորհուրդները ընտրում են կազաների խորհուրդը, կազաների խորհուրդները սանջակների, սանջակներինը վիլայէտի։

Ինչպէս տեսնում էք, քանի բարձրանում ենք, այնքան „զտւում“ է, այնքան ժողովուրդը հեռացնւում է անմիջական մասնակցութիւնից վարչական գործերում. մասնակցողները լինում են ընտրեալների

ընտրեալները և այն էլ մի քանի աստիճաններով։ Դիպլոմատիան, ինչպէս ասել ենք, պէտք էր պաշտպանէր սուլթանի կառավարութեան իշխանութիւնը և հայ ժողովրդի աչքերին թոզ փչելով, հայկական յեղափոխական շարժման առաջն առնէր, և ահա այդ թոզը։ Նա իբր թէ ընդունել է „ժողովրդի մասնակցութիւնը“ վարչական գործերում, բայց այն ձևն է տուել, որ անվնաս է մնացել կառավարութեան իրաւունքների ամբողջութիւնը, իսկ ժողովրդի մասնակցութիւնը մաղլցելով՝ հասցրել է այն աստիճանին, որ այլ ևս թեփ չէ մնացել. նրա իրաւունքների շուաքը իսկ չէ երևում։ Մինչդեռ, եթէ խնդրի վրայ նայում էք թռուցիկ, անցողաբար, ձեզ թւում է, թէ ժողովրդի իրաւունքները որոշ չափով յարգուած են և արուած է աւելին, քան թէ կարելի էր սպասել դիպլոմատիայից, որ ժողովուրդը մասնակցում է վարչական խնդիրներում իր ներկայացուցիչների միջոցով, ասել է թէ՝ բաւականութիւն է տուած և՛ դժգոհ տարրին։ Բայց երբ ձեռք էք առնում անդամահատի դանակը և սկսում էք քննել լրջութեամբ ու անդամահատել, դուք գտնում էք, թէ դա մի մաշկ է ծածկելու վիժածը, ժողովուրդը իսկապէս ոչ մի իրաւունք չի վայելում, այլ որ նա ենթարկուած է լինելու սուլթանից նշանակուած պաշտօնեաների կամայականութեան, քմահաճոյքին։ Սրանում համոզելու համար, հարկաւորէ վերցնել միայն այն, որ ընտրութիւնները ղեկավարելու են սուլթանի պաշտօնեաները, մի կողմը թողնելով՝ որ արդէն հենց սաղմում, հենց առաջին քայլում ժողովրդի մասնակցութիւնը սահմանափակուած, խեղդած է ու հեռացրուած աւելի բարձր խորհուրդների անմիջական ընտրութիւնից։ Պարզ է, թէ ի՞նչեր տեղի կունենան այդ ընտրութեան ժամանակ, ի՞նչ տեսակ ընտրութիւն կը լինի և ո՞վքեր կընտրուին. և մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ իսկապէս ժողովրդի իրաւունքը կորչում, կեղեքւում է. ժողովրդի իրական պահանջին համապատասխանող միակ կէտն է այս և այն էլ այլասեռել, սուլթանական հաղուստ են հագցրել. ի՞նչ պիտի սպասէ ժողովուրդը…

Բայց մի վայրկեան ընդունենք հակառակը և ասենք, թէ մենք սխալւում ենք, կուրանում ենք մեզ „ղեկավարող գաղափարով“, թէ ժողովրդի ձայնը դրական կշիռ ունի և նրա „անմիջական“ ու „միջական“ ընտրեալները որոշ դեր ունին, և մինչև իսկ այդ խորհուրդները մի-մի կօնտրօլներ, վերահսկողներ են սուլթանի պաշտօնեաների վրայ։ Շատ լաւ։

Այժմ, եթէ պաշտօնեաներից մէկը, սխալմամբ, ապօրինութիւն է գործում և շարունակում է, կամ թէ չէ, նրա ու խորհրդի մէջ ծագում է անհամաձայնութիւն և իւրաքանչիւրը իրենն է առաջ տանում, ի՞նչ հետևանք կարող է ունենալ։ Ա՛յն, որ գործին կը միջամտի մի այլ վարչութիւն, որովհետև, ըստ Ծրագրի, կան աւելի բարձր վարչութիւններ, որոնք գտնւում են բուն երկրից դուրս, այն քաղաքում, ուր և գտնւում է ինքը սուլթանը։ Տաճկահայաստանի վարչութիւնը ենթարկւում է դրանց և այդտեղ այլ ևս գոյութիւն չունի ոչ մի խորհուրդ։ Որքան էլ ցանկանալու լինէք ենթադրութիւններ անել ժողովրդի իրաւունքի և մասնակցութեան թեզը երկարացնելու, ոչ մի հնարաւորութիւն չկայ. ինչպէս որ մայրաքաղաքն է հեռու բուն երկրից, նոյնպէս էլ ժողովուրդը այդ վարչութիւններից և դուք՝ ուզենաք չուզենաք, պէտք է պարզապէս ասէք՝ —որ ժողովուրդը ենթարկւում է այս վարչութիւններին և նրա ձայնը սրանց առջև հանում է մինուս զէրօյի։ Նա, ժողովուրդը պարտաւոր է միայն հնազանդւել և ուշադիր լինել կատարելու, ինչ որ իրեն հրամայում են։

Եւ որպէս զի մի թեթև ամբողջութիւն կազմեն մեր ներկայացրած կէտերը, երկու խօսք էլ ասենք այդ բարձր վարչութիւնների մասին։

Առաջի վարչութիւնը մի նոր մարմին է, որ իւր վրայ կրում է „Վերահսկող մնայուն կօմիտէ“ անունը, որի պաշտօնը կայանում է միայն կօնտրօլ անելու, փաստերի, իրողութիւնների վրայ մատնացոյց անելու մէջ (թէ ինչ ձևով կը կատարւի, այդ էլ ենք թողնում. յայտնի է). նա ոչ մի վճիռ տալու իրաւունք չունի, այս վերջին կէտը բացառապէս վերապահուած է Բարձրագոյն կամ մի և նոյն է ասել սուլթանին, որը արդէն ամենաբարձր ինստանցիան, հիմնարկութիւնն է, սա վերջին կէտն է։ „Մնայուն կօմիտէն“ հսկում է և ըէֆորմների ճիշտ գործադրութեան վրայ։ Հենց այստեղ չպէտք է մոռանալ, որ այս վարչութեան անդամները չպէտք է մոռանալ, որ այս վարչութեան անդամները նոյնպէս նշանակւում են, առանց մի որ և է միջամտութիւնների, ուղղակի սուլթանի կողմից։

Երկրի կառավարիչները սուլթանի մարդիկն են, սրանց վրայ հսկողները և գործերը քննողները նոյնպէս. ինչ արդիւնք պիտի սպասել։ Շատ դրական. երկրի ամբողջ կառավարչական ոգին մարմնանալով սուլթանականութեան մէջ, նրա պաշտօնեաներն էլ պէտք է լինին հաւատարիմ արձագանքը, նրա ճշմարիտ պատկերը. երբէք չպէտք է ցնորքների մէջ ընկնել և կարծել, որ „Մնայուն կօմիտէն“ կարող է զատ ոգի և տեսակէտ ունենալ ժողովրդի շահերի ու պահանջների վերաբերմամբ, քան թէ ինքը սուլթանը։ Դա կը լինի ամենակոպիտ և տգէտ սխալ. սուլթանին ենթարկուող և թէ

Երանից նշանակող մարմինների գործունէութիւնը լինելու են շատ համեստաշխ.—ըստ սուլթանի տուած Ծրագրի և պատուէրների։ Եթէ տեղի ունենայ մի տարօրինակ, չնաշխարհիկ երևոյթ և „Մնայուն կոմիտէն“ հակառակ ոգի ունենայ, դարձեալ նա ոչինչ չէ կարող անել, որովհետև, ինչպէս ասացինք, նա վճռող և գործադրող մարմին չէ։

Միշտ և միշտ սուլթանը. երկք պետութիւնների նոր-լակամ բէֆորմների գործադրողները, պահպանողները ու վերահսկողները լինելու են սուլթանի գործակատարները, որոնք երթարկուում են ամբողջովին սուլթանին. վէտօն սրանն է, ամեն ինչ սա է և առանց սրա չիք ոչինչ։ Եզրակացութիւնը աւելի քան պարզ է և միշտ նոյնը—Ներկայ իրերի դրութիւնը մնում է անփոփոխ. այս է ճշմարտութիւնը. բողոքեցէ՛ք, եթէ կայ տարբերութիւն...

Բայց որպէս զի բաց տեղ չմնայ, յիշատակենք և „Բարձր կոմիսեօնները“, որը պիտի դարձեալ նշանակի սուլթանից և որի ընտրութեանը, այս անգամ արդէն լրջօրէն, հաւանութիւն պիտի տան պետութիւնները։ Սա մի „թռուցիկ իշխան“ է, որ պիտի անցնի երկրի մի ծայրից միւսը՝ բէֆորմները մտցնելու և իւր „միսսիան պիտի կնքի մի ընդհանուր քննութիւն կատարելով“. իսկ յետոյ.—նա այլ ևս չկայ, համբառնում է... և ամեն ինչ մնում է կատարելապէս սուլթանին և իւր գեադաներին... սրանից յետոյ.—հեղեղ... Ո՞ւմ հոգն է...

Հապա Ամնիստիա՞ն, Էմիգրանտների վերադարձը, Կանոնաւոր դատավարութիւնը, Բանտերի վիճակը և այլն։ Սրանք ինքն ըստ ինքեան լինելու են հետևանք ներկայ իրերի փոփոխութեան։ Եւ մենք ոչինչ չենք ընդունում սուլթանի կողմից իբրև շնորհ, որովհետև չենք ընդունում և նրա իշխանութիւնը. նա, սուլթանի իշխանութիւնը, կառավարութիւնը ապօրինի է, հիմնուած է անառակութեան վրայ, մարդկային ամենասուրբ ու անարատ զգացմունքների կեղեքման վրայ. նա բռնակալութիւն է։

Մենք կռուում ենք բռնակալութեան դէմ, որովհետև նա է թշնամին, որովհետև նա է պատճառը ներկայ թշուառութեանց. քանի որ նա կայ և ապրում է, կապրին դարշելի ներկայ պայմանները։ Կուել մէկի դէմ չի նշանակում ճանաչել նրա իրաւունքը, այլ գոյութիւնը. և մենք կռուում ենք նրա գոյութեան դէմ, մենք նրա ոչնչանալն, նրա մահն ենք պահանջում. մեր հարուածները ուղղուած են նրա, բռնակալութեան կեանքի դէմ... ընկաւ բռնակալութիւնը, սուլթանականութիւնը և նրա դիակի վրայ կանգնեց ժողովուրդը, յաղթութիւնը տարուած է...

Դիպլոմատիան արել է այն, ինչ որ ուզում էր.—պահպանել Փոքր Ասիայում ներկայ քաղաքական դրութիւնը, սուլթանի միապետական պրէստիժը և հայ յեղափոխական ժողովրդի աչքին թող փչել, որովհետև ներկայումս այդ է պահանջում նրա պետական շահերը։

Մենք էլ մերը կանենք։

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ *)

ՄԱՄԲՐԷ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԷՆԼԵԱՆԻ

—

Մամբրէ վարդապետ Պէնլեան, որ կը պատկանէր Հնչակեան կուսակցութեան, իր անչափ վնասակար և ազգադաւ գործունէութեամբը որչա՞փ աղէտաբեր եղաւ Կ. Պոլսոյ մերայնոց իր հարցաքննութեան մէջ ըրած խոստովանութիւններէն, արդէն յայտնի է. Թողով իր վարդապետական կարգը՝ նա առաջին օրէն դարձաւ օսմ. կառավարութեան մի հայ առաջին լրտեսը և անխղճաբար շարունակեց իր աղետալի շահատակութիւնները ի վնաս իր ազգին, եկեղեցւոյն ու կրօնին։ Մամբրէ վարդապետ կարգազուրկ լինելէ յետոյ Ալէքսան յորջորջուեցաւ։ Աղէտաբեր Ալէքսանը հազարաւոր մայրեր լացուց, հազարաւոր կիներ այրի և հազարաւոր մանուկներ որբ թողուց, իւր խիղճը երբէք չի տանջեց զինքը, նա երբէք օր մը չի զղջաց, նա միշտ հալածեց հայը, նա հազարաւոր անմեղներու աքսորանաց և բանտարկութեան պատճառ եղաւ իր բացարձակ զրպարտութիւններովը։

Ինչպէս որ քիչ մը վերը յիշեցինք Մամբրէի հնչակեան Կ. Պոլսոյ մասնաճիւղի անդամ ըլլալը. երբ Գումգաբուի դէպքէն քանի մը օր վերջը տեսնելով, թէ ինքն ալ վտանգի և ձերբակալութեան պիտի ենթարկուի, խոյս կուտայ Պոլսէն դէպի Պէյազիտ, այնտեղ ոստիկանութիւնը կը հալածէ, շուտով կը վերադառնայ Պոլիս. տեսնելով իր ընկերներուն ձերբակալութիւնը երկիւղէն ազատելու միջոց կորոնէ և վերջապէս կորոշէ ինքն անձամբ երթալ ոստիկանութեան նախարար նա-

---

*) 1890 թուականին, Յուլիս ամսոյ 15-րդ օրը Կ. Պոլսոյ Գում-Գաբուի նշանաւոր ցոյցին մասնակցող ծանօթ դէմքեր ի վերջոյ ուղղակի կամ անուղղակի կերպիւ դարձան մէկ մէկ վնասակար մատնիչներ. մենք ապագային այդ անձնաւորութեանց գործերը ճշմարտապէս երեւան հանելու նպատակաւ ամենամեծ զոհողութիւններով յաջողած ենք ձեռք բերել իւրաքանչիւր խոստովանութեան պաշտօնական թղթերը եւ կարգաւ թարգմանելով՝ պահած ենք ապագային. մենք առայժմ հրատարակութեան կը տանք այս տեղեկագիրը։

Մամ. Կ. Պոլ. Կեդ. Կոմիտէ։

զըմ պէտին անձնատուր ըլլալ և խոստովանել ճշմարտութիւնը, ուղղակի երթալ յանձնելիք. „ես ալ հընչակեան եմ“ ըսելը իրեն համար վտանգաւոր կրնար ըլլալ. ուստի նա կը դիմէ ուրիշ միջոցի մը, այսինքն ինքը կը խմբագրէ „Հնչակ“-եան կուսակցութեան կողմէ սպառնական նամակ մը իւր անուան ուղղուած և այդ նամակը կը տանի ոստիկանութեան նախարարին և անոր պաշտպանութիւնը կը խնդրէ։

Ահաւասիկ այդ նամակի պատճէնը, զոր գտած ենք իր հարցաքննութեան պաշտօնական թղթերու մէջ և կէտ առ կէտ օրինակելով դրած ենք հոս։

Ահաւասիկ պատճէնը կեղծ վեկուցագրին.

Հնչակական կուսակցութիւն.

(Կ. Պոլիս մասնաճիւղ)

Դեր. Մամբրէ վարդապետ Պէնլեան

Իւսկիւտար Սէլամիէ

Կուսակցութեանս գործադիր ժողովը, տեղեկացած լինելով, որ դուք մեզի դէմ դաւադրութիւններ ընելու մտադիր էք, ժողովոյս ներկայ որոշումով մահուան կը դատապարտենք Ձեզ, եթէ ի գործ դնէք այդ վնասակար և ազգասպան դիտաւորութիւնը։ Զգուշացէք։

Հնչակեան կուսակցութեան մասնաճիւղ

Կ. Պոլսոյ։

Կ. Պոլիս, 9 սեպտեմբերի 1890

Կիւրակի։

Մամբրէ վարդապետ նոյն օրը երեկոյին վերոյդրեալ շինծու սպառնական նամակը դողդոջալով և արտասուելով կը տանի ոստիկանութեան նախարար Նազըմ պէյի ապարանքը. երեկոյին կը հիւրընկալուի և հետևեալ օրը ոստիկանութեան դուռը տանելով՝ կը հարցաքննուի պաշտօնապէս։

Ահաւասիկ իր հարցաքննութեան մէջ ըրած սարսափելի խոստովանութեանց թուրքերէնի հայ թարգմանութիւնը.

Հարցաքննութիւն Մամբրէ էֆէնդիի.—

Հարցաքննիչը.—Ի՞նչ է անունդ և մականունդ։

Մամբրէ.—Անունս Մամբրէ վարդապետ (բահիպ) է, մականունս Պէնլեան։

Հարց. —Քանի՞ տարեկան ես։

Մամբ. —Քսան և ութը տարեկան եմ։

Հարց. —Ո՞րտեղացի ես։

Մամբ. —Կ. պոլսեցի եմ, Իւսկիւտար Սէլամսըզ թաղէն։

Հարց. —Ո՞ր տէրութեան հպատակ էք։

Մամբ. —Օսմանեան հպատակ եմ։

Հարց. —Արհեստդ ի՞նչ է։

Մամբ. —Արհեստով եկեղեցւոյ պաշտօնեայ եմ, վարդապետ (բահիպ)։

Հարց. —Ո՞ր կրօնի և ազգութեան կը պատկանիք։

Մամբ. —Լուսաւորչական հայ եմ. ԳումըՀաբուի պատրիարքարանին կը պատկանիմ։

Հարց. —Ո՞ր տեղի եկեղեցւոյ պաշտօն կը վարէք։

Մամբ. —Իւսկիւտարի Սէլամսըզ ս. Խաչ եկեղեցւոյ մէջ է պաշտօնս։

Հարց. —Ամսականնիդ որչա՞փ է։

Մամբ. —Ամսական չունիմ, արտաքոյ կարգի հասոյթներով կապրիմ։ Յուղարկաւորութեան կերթամ, ուրիշ եկեղեցիներ կը հիւրասիրուիմ, պաշտօն կը վարեմ, բոլոր շահուս աղբիւրները ասոնք են։

Հարց. —Ուրախ ենք, որ դուք այսօր եկած էք հայոց գաղտնի ընկերութեանց մասին մեզի տեղեկութիւններ տալու յեղափոխական խումբի կողմանէ. ձեր հասցէին ուղղած նամակէն յայտնի կերևի, թէ դուք ևս այդ ընկերութեան մէջ կը գտնուիք և անդամակցութիւն ունիք, և դուք այսօր կրնաք այդ անհաւատարիմ և վնասակար անձինքները ցոյց տալ մեզ, հոգ չէ, որ անոնք սպառնական գիր խրկած են ձեզ. դուք ինքզինքնիդ ամէն վտանգէ զերծ համարելով՝ ցոյց պիտի տաք կառավարութեան զանոնք, որպէս զի իրենց արդար պատիժը կրեն։ Ե՞րբ ստացաք այս նամակը։

Մամբ. —Երեկ առաւօտ, որ կիւրակի էր, կանուխ ելայ եկեղեցի երթալու համար, հագնուեցայ, երբ փողոցին դուռը բացի դուրս ելլելու համար, դոց պահարանի մէջ այս սպառնական նամակը առաջևս ինկաւ, նամակը գրպանս դրի և եկեղեցի երթալով՝ խուցս մտայ. այնտեղ բացի նամակը, կարդացի և տեղեկացայ պարունակութիւնը. եկեղեցւոյ արարողութիւնը վերջանալէ յետոյ բնակարանս եկայ և մտածեցի թէ ի՞նչ ընել պէտք է. վերջապէս որոշեցի կառավարութեան իմաց տալ իրականութիւն և անով հաստատել իմ հաւատարմութիւնս առ օսմ. պետութիւն, որոյ ուխտեալ եմ՝ եկեղեցականութեան կարգս առած ժամանակ։

Հարց. —Դուք որչա՞փ ժամանակ այս խռովարար ընկերութեան մէջ մտած էք։

Մամբ. —Հինգ-վեց ամսոյ չափ լինելու է։

Հարց. —Անշո՞ւշտ Գումըգաբուի պատրիարքարանը եղած դէպքի առթիւ կանխաւ տեղեկութիւն ունէի՞ք դուք։

Մամբ. —Այդ առթիւ շատ քիչ տեղեկութիւն ունէի, որովհետև կոմիտէի անդամները գաղտնի կը պահէին ոչ միայն ինձմէ, այլ ուրիշ շատ անդամներէ։

Հարց. —Ի՞նչ պատճառաւ գաղտնի կը պահէին, միթէ ձեր հաւատարմութեան վրայ կասկած ունէին։

Մամբ. —Որչափ որ յայտնի է ինձ „Հնչակեան“ կոմիտէի մի քանի անդամոց միայն գիտակցութեամբը պատրաստուած էր այդ ցոյցը, և այդ ցոյցը ընողները աւելի Փորթուգալեանի խմբին կը պատկանէին, որչափ որ Հնչակեաններուն։ Օրինակի համար, Յարութիւն Ճիհանկիւլեան և Կէմալմազ Մանուկ *) Փորթուգալ-

*) Կէմալմազ Մանուկ անուն հայրենասէրը նահատակուեցաւ Գումըգաբուի նշանաւոր ցոյցի օրը։

եանի կուսակցութենէն էին, հնչակեաններ ալ կը գտնուէին, բայց նոքա շատ քիչ էին։

Հարց. —Դուք Փորթուգալեանի ընկերութեան մէջ մտած և անդամակցութիւն ըրած էք։

Մամբ. —Երբէք, ես այդ ընկերութեան պատկանողները Գում-Գաբուի ցոյցէն վերջը ճանչցայ, երբ նոքա ձերբակալուեցան, իսկ անկից առաջ անոնցմէ և ոչ մէկը կը ճանչնայի։

Հարց. —Հնչակեաններ՞ը շատ են՝ թէ Փորթուգալեաններ՞ը։

Մամբ. —Պոլսոյ մէջ նախ և առաջ Փորթուգալեան կուսակցութիւնը երևան եկած է. հնչակեանները երկու տարի վերջը գործունէութիւն ըսկսած են։

Հարց. —Այդ երկու վնասակար ընկերութեանց բուն նպատակները կրնա՞ք բացատրել մեզ։

Մամբ. —Անոնց նպատակները բացարձակապէս օսմանեան երկրի մէջ յեղափոխութիւն հանել և այսպիսով Հայկական իշխանութիւն մը ձեռք բերել. ահա այս է անոնց բուն նպատակը։

Հարց. —Հնչակեան և Փորթուգալեան կուսակցութեանց տարբերութիւնը ի՞նչ է։

Մամբ. —Անոնց երկուսին ալ նպատակը միևնոյնն է, այսինքն զինու զօրութեամբ ազատ ըլլալ։ Հնչակեան կոմիտէն իր հրատարակութիւններով ժողովուրդը ուղղակի դէպի յեղափոխութեան կառաջնորդէ. ապստամբութիւնը աւելի դրական միջոց մը է, կսէ, Թրքական լուծը թօթափելու և ազատ ըլլալու համար. իսկ Փորթուգալեան հայ ժողովրդին կը քարոզէ միշտ իրեն հպատակել և համերաշխութեամբ գործել ժամանակին պահանջմանց համեմատ. Փորթուգալեան անընդհատ և շարունակաբար իր „Արմենիա“ թերթի միջոցաւ դրամ կը պահանջէ ժողովրդէն։ Այս վերջինի մասին իմ կարծիքս այն է՝ թէ Փորթուգալեան կուզէ մեծաքանակ գումար մը ձեռք բերելով, Ռուսաստանէն զէնք պիտի գնէ և այդ զէնքերը սահմանէն անցնելով վան՝ պիտի խրկէ հայոց բաշխելու և յեղափոխութիւն յարուցանելու համար։

(Կը շարունակուի)

ԽԱՐԱԽԱՆԵԱՆ

ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ

II

1892 թ. սեպտեմբերին պատրիարքարանի հրամանով Խարախանեանը Բաղէշ եկաւ առաջնորդական ընտրութիւն կատարել տալու։ Թահսի փաշան սկսել էր հայերը մէկ մէկ բանտարկել և կողոպտել։

Բաղէշից Խարախանեանը անցաւ Բուլանըխ և Մանազկերտ, և այդ երկու գաւառակի հայերի վիճակը գիւղ գիւղ շրջելով՝ ուսումնասիրեց ու հարստահարութիւնները գրեց, որպէս զի Մուշ վերադառնալուն մի օրինակ կառավարութեանը տայ, մի օրինակ էլ ուղարկի պատրիարքարան։ Այս միջոցին պատահում է մի դէպք. Ավզոտի տիլի մուշաղշէնցի Աստուածատուրը իւր վրայ եկող ոստիկաններից Իսախ չավուշին սպանում է, ինքն էլ սպանուում։ Այս դէպքը Թահսի փաշայի ձեռքում մեծ զէնք է լինում. անհատական դէպքին նա տալիս է քաղաքական գոյն. սոսկալի և անկարագրելի տանջանքներով ստիպում է տալ վարդենեսցի Մարգար վարժապետի և ուրիշների անունները, վերջապէս այդ ամբողջ դէպքը տեղեկագրում է՝ իբրև Խարախանեանի թելադրութեամբ կատարուած. այսպիսով սուլթանից ստանում է հրաման Խարախանեանին ձերբակալելու։ 1893-ի Յունուարի 17-ին վերադառնում է Մուշ և ուղարկում է պատրիարքարան Ավզուտի դէպքի ճիշտ նկարագիրն, յայտնելով, որ ավզուտցիներից ոմանց ծեծելով և երկաթով դաղելով ստիպել են՝ իրեն իբրև թելադրող ցոյց տալ Նոյն տարւայ Փետրուարի 3-ին Մշոյ ընդհանուր դատախազի օգնականը և ոստիկանութեան տեսուչը մի խումբ ոստիկաններով առաջնորդարանը խուզարկեցին, բոլոր արձանագրութիւնները, թղթերը, գրքերը տոպրակների մէջ լցրած կնքեցին և իրեն առաջնորդին էլ հրաւիրեցին կառավարութեան ապարանքը։ Խարախանեանը մէկէն մէկ չուզեց գնալ՝ առարկելով, թէ մինչև պատրիարքարանից հրաման չլինի, չի կարող գալ. կառավարութիւնը մի քանի երևելի հայեր ուղարկեց նրան համոզելու, որ ընդդիմութիւն չանէ, որից կարող են վատ հետևանքներ յառաջ գալ։ Վերջապէս նրան բռնի կերպով Մուշից Բաղէշ բերին, ճանապարհին հայոց գիւղերը հանդիպելուց զգուշանալով։ Բաղէշի մէջ նրան մի ամենավատ սենեակի մէջ փակեցին և յարաբերութիւններից բոլորովին կտրեցին։ Սպասաւոր անգամ չէր կարող մտնել մօտը և եթէ ինչ ինչ հարկաւոր պատուէրներ ունենար, տաճկերէն պիտի յայտնէր, այն էլ մի ոստիկանի ներկայութեամբ։ Բանտարկութեան երկրորդ ամսում Խարախանեան մի հեռագրով բողոքելով իւր դէմ եղած բռնութեանց մասին՝ խնդրել էր դատի տեղափոխութիւնը. այս հեռագրի օրինակը պատրիարքարանին էլ հաղորդուեցաւ։ Սակայն Թահսի փաշային յաջողեց այս հեռագիրը անհետևանք թողնել։ Բանտարկութեան մէջ նրա դէմ այնպիսի բիրտ վարմունքներ էին թոյլ տալիս ոստիկանները, ինչ որ քիւրդ բանտարկեալին կը խնայէին, արհամարհանք, ծաղր, նախատինք, հայհոյութիւն։ Դուրս գալ և մտնել կարող էր միայն հինգ-վեց սէնեաւոր ոստիկաններով. այսպէս նա ապրեց մի խոնաւ, աղտոտ, ներքնայարկ և մերկ սենեակի մէջ մինչև տարւոյս ապրիլի սկզբները։ Կառավարութիւնը չկարողանալով նորա դէմ ապացոյցներ գտնել ժամանակին, մի քանի բանտարկեալների տանջանքներով և խաբէութեամբ իւր ուզածները գրել և ստորագրել տուեց. յետոյ նրա թղթերի միջից մի քանի պաշտօնա-

կան նամակների ուրիշ ընդարձակ մեկնութիւն տալով, նրա դէմ իբրև ապացոյց գործածեց։ Դատարանում անդամակցող երկու հայերից մէկին առնելով, միւսին միայն թողեց, որ մի գուցէ երկու հայերը միացած Խարախանեանի դատապարտութեան վճիռ տան. դատարանը նրան փաստաբան տուեց մի թուրք, հայի արգելուած էր նրան փաստաբան լինել։ Ուստի փաստաբանը կառավարութիւնից թելադրուած՝ աշխատեց նրան մոլորեցնել և օգնելու փոխարէն վնաս տուեց։ Դատարանը զլացաւ տալ նրան մի օրինակ այն ամբաստանութեանց, որոնք նրա դէմ էին։ Դատավարութեան արձանագրութիւնը անգամ խարդախ կազմուած է. ինչ որ նպաստաւոր է նրան, չէ արձանագրուած, իսկ աննպաստ և նրա դէմ խօսածներն շատ յաւելուածներով արձանագրուած են. և այս մասին մեղադրեալի դիտողութիւններն էլ անլսելի են մնացել և առանց արձանագրելու։ Դատարանը հակառակ օրինաց և Խարախանեանի պահանջման մերժեց ատեանը կանչել և հրապարակաւ մեղադրեալի ներկայութեամբ խօսք տալ նրա դէմ, իբր վկայ նշանակուած ավզոտցի Յակոբին և Մալխասին, գիտնալով, որ նոքա եթէ ատեանը գային, պիտի խօսէին, ինչ որ ճշմարիտ է, պիտի յայտնէին իրենց կրած սոսկալի չարչարանքները։ Կառավարութիւնը յայտնի չէ, թէ որտեղից գըտել էր նրա դէմ մի սքանչելի վկայ, Վանայ վիճակի դիւղերից Էժշիտ Շավել անունով մէկը, որին թելադրել էր՝ ասել ծայրայեղ ստեր։ Այս վկան միայն բերուեցաւ ատեան. նա ևս խոստովանեցաւ, թէ իրեն չափազանց ծեծելով, թելադրած էին ասել իր չը գիտցած բաները, թէ ինք երբէք Մուշ գնացել չէ և Մշոյ առաջնորդին չի ճանաչում... շատ ամօթ, բայց ո՞վ կամաչի։ Դատարանը Խարախանեանին հինգ տարուայ բանտարկութեան դատապարտեց. սակայն այդ վճիռը չը ընդունուած է և ետ եկած ութ ամիս առաջ։ Վճռաբեկ ատեանը երկու պատճառով վճիռը չնչել է. Ա. նրա համար, որ յանցանքը և որոշուած պատիժը համեմատական չէ գտել. պատիժը թեթև է եղել։ Բ. նրա համար, որ Խարախանեանի ցոյց տուած վկաները մերժած են։

Խարախանեանի երկրորդ դատաւարութիւնը սկսուեց փետրուարի 6-ին այս տարի և որոշուեց՝ նրա ցոյց տուած վկաները բերել տալ։ Բայց սորանից յետոյ հրաման եկաւ Խարախանեանին Պոլիս փոխադրել։ Պատրիարքարանի վերաբերմունքը այս խնդրում շատ թոյլ է եղած։ Օսմանեան սուլթանների ֆիրմանների տրամադրութեամբ Տաճկաստանի հայ եկեղեցականները իրաւունք պիտի ունենան վայելել ինչ ինչ առանձնաշնորհումներ և մասնաւորապէս ազատ էին ձերբակալութիւններից և կառավարութեան ձեռարձակութիւններից. հասարակ քահանային անգամ անմատչելի էին, բայց պատրիարքարանը Աշղեանի օրով չկարողացաւ այդ հին իրաւունքն անգամ պահել պաշտպանել։ Միայն նոր պատրիարք Իզմիրլեանի զօրեղ կամքի շնորհիւ էր, որ բազմաթիւ յեղափոխականներ, նորա թւում և ներսէս Խարախանեանը, խոնաւ և խուլ բանտերից ազատուեցան և տեղափոխուեցան Կ. Պոլիս։

ՆԻՒԹԱՑԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Կ. Պոլսի Կեդրոնական սնդուկի մէջ Բլուր քաղաքէն ստացուեցան.

Հրաբուղխ 10 դահեկան., Ամբատ 20 դ., Ածելի 10 դ., Մախաթ 10 դ., Մեղու 40 դ., Ավաւ 10 դ., Արշակ 20 դ., Խոսի 6 դ., Դանակ 20 դ., Գրիչ 20 դ., Երևանդ և Հրանտ 40 դ., Պիզ 5 դ., Սլաք 20 դ., Պասման 20 դ., Գամիկ 10 դ., Արկղ 20 դ., Խփէք 20 դ., Մռայլ 10 դ., Համրիչ 20 դ., Զսպանակ 10 դ., Վաղարշակ 20 դ., Մէքենայ 10 դ., Պղինձ 20 դ., Խարտոց 5 դ., Կոճղ 5 դ., Նագրավ 20 դ., Մեսաքս 56 դ., Վրոյը 10 դ., Պշիռ 10 դ., Կարկուտ 20 դ., Ճարպիկ 20 դ., Արամ 10 դ., Պողպատ 10 դ., Մոստիչ 10 դ., Կարդինալ 10 դ., Միհրան 8 դ., Աստղ 20 դ., Պիծակ 10 դ.։

Վիշապ քաղաքի Կեդրոն. սնդուկի մէջ ստացուեցան.

Մեղրիկ 55 դահեկան, Արամ 20 դահ., Մամիկոնեան 100 դ., Կայծեր 70 դ., Ոճ 80 դ., Վ. Կայծակ 110 դ.։

Շամ-ից 27 ռուբլի, Եկտ-ից 20 ռ., Օդ-ից 95ռ., Հ. Ա-ից 10 ռ., Դշ-թից 17 ռ., Օդ-ից 149ռ., Օդ-ից 400 ռ., Ակց-ի խմբերից՝ Գահից, Արծաթից, Փայլակից, Անիւից և ... 140 ռ., Գ. քաղաքի „Գարունից“ 40 ռ., Ապառաժ ք-ից 500 ռուբլի։

Պրոց Ս. Ց. 10 զան.

„Գարունից“ 500 փամփուշտ, Թփ. քաղաքի „Փարոս“ խմբից 41 զօնդաղ։

Անկարող լինելով մեզ բոլոր դիմողներին պատասխանել առանձին-առանձին, կրկին անգամ յայտարարում ենք, որ թէ „Դրօշակը“ և թէ մեր միւս հրատարակութիւնները ուղարկւում են ձրի։

Ուղղակի „Դրօշակ“-ի հասցէով ուղարկած նիւթատուութիւնները, եթէ լոյս չեն տեսնում մի-երկու համարից յետոյ, խնդրում ենք յայտնել այդ մասին անմիջապէս։

Խնդրում ենք հասցէները գրել խիստ որոշ և պարզ։

Դաշնակցութեան անծանօթներից խնդրւում է թղթակցութեան և նիւթատուութեան համար դիմել.
L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան